



Արդեն 5 տարի է Ալյանս Թու Սեյվ Էներջին (Էներգախնայողության Ալյանսը) Հայաստանում իրականացնում է «Մունիցիպալ Էներգաարդյունավետության ցանց» (ՄԷՑ) ծրագիրը՝ ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության (ԱՄՆԲԶԳ) ֆինանսավորմամբ: ՄԷՑ ծրագիրը ջանում է ամբողջ տարածաշրջանում առկա էներգախնայողության դրական փորձը տարածել համեմատաբար էժան եղանակով:

Ալյանսի MUNE Ծրագիրը գործունեություն է ծավալում չորս հիմնական ուղղություններով՝

- ✓ Օրենսդրական բարեփոխումներ,
- ✓ Բնակարանային էներգաարդյունավետություն և ջնշուցում,
- ✓ Կրթություն / Իրազեկության բարձրացում,
- ✓ Քաղաքային էներգաարդյունավետության ցանցի ստեղծում:

Օրենսդրական բարեփոխումներ

- Ստեղծվել է Հայաստանի էներգաարդյունավետության Խորհուրդ, որտեղ ընդգրկված են տարբեր նախարարություններ, հասարակական կազմակերպություններ, կրթական և էներգետիկ ոլորտի ներկայացուցիչներ և դոնորներ: Այս կառուցվածքը ապահովում է քննարկումներ էներգետիկ քաղաքականության շուրջ և իրականացնում է էներգաարդյունավետության բարեփոխումներ:
- Մշակվել է Հայաստանի էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի (ԷԼՎԷ) մասին օրենք:
- Մշակվում է ՀՀ էներգախնայողության Ազգային Ծրագիր և ԷԼՎԷ օրենքի ենթաօրենսդրական ակտեր

Բնակարանային էներգաարդյունավետություն և ջնշուցում

- Համատիրությունների հետ հարցումների անցկացում մի շարք քաղաքներում՝ էներգաարդյունավետության և ջնշուցման կարգավիճակն ու խնդիրները բացահայտելու, ինչպես նաև ուսուցողական ծրագրերի իրականացման կարիքներն ու առաջնայնությունները պարզելու համար
- Աջակցություն համատիրություններին վարկային միջոցներով ջնշուցման ծրագրերի իրականացման ընթացքում
- Հետազոտությունների իրականացում, դրանց տպագրումն ու տարածումը

Կրթություն / Իրազեկության բարձրացում

- «Ընենքերի էներգաարդյունավետության նախագիծ» համակարգչային ծրագրի ուսուցում, որն իրենից ներկայացնում է շենքերում և շինություններում էներգաօգտագործման արդյունավետության բարձրացման տեխնիկատնտեսական հիմնավորումների մշակման համակարգչային ծրագիր և թույլ է տալիս մշակել էներգաարդյունավետության նախագիծ և բիզնես ծրագիր: Դասընթացներ են կազմակերպվել 11 քաղաքապետարանների ներկայացուցիչների և մի շարք համատիրությունների համար
- Էներգաարդյունավետության և ջնշուցման հարցերին նվիրված համատիրությունների ուսուցման ծրագրերի և սեմինարների կազմակերպում, բնակարանային էներգաարդյունավետության և ջնշուցման հարցերով խորհրդատվության ապահովում
- Վերականգնվող էներգիայի վերաբերյալ ուսուցողական պաստառների և մեթոդական ձեռնարկների պատրաստում՝ Հայաստանի դպրոցների համար և էներգետիկ կրթության սեմինարների կազմակերպում բարձր դասարանցիների համար

Հայաստանում քաղաքային էներգաարդյունավետության ցանցի ամրապնդում և համագործակցություն քաղաքների հետ

- Տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքապետարանների հետ կապերի ամրապնդում, Հայաստանի մի շարք քաղաքների էներգաարդյունավետության խնդիրների վերաբերյալ քննարկումների և փորձի փոխանակման ապահովում
- Ուսուցողական շրջագայությունների (Լեհաստան, Լիտվա, Ուկրաինա) կազմակերպում՝ բնակելի և քաղաքային էներգաարդյունավետության ոլորտում հաջող փորձերին ծանոթանալու համար

- Էներգաարդյունավետության ֆինանսավորման գործիքների և նախագծերի մշակման համար կիրառելի համակարգչային ծրագրերի ուսուցման կազմակերպում
- Քաղաքային էներգապլանավորման վերաբերյալ ուսուցման կազմակերպում Հայաստանի 14 քաղաքապետարանների համար (Հայաստան, Մոլդովա)
- Քաղաքապետարանների հետ քաղաքային էներգետիկ աշխատախմբի հիմնման վերաբերյալ բանակցությունների վարում՝ ուղղված էներգաարդյունավետության ֆինանսավորմանը և ջեռուցման կազմակերպման հարցերում սոցիալապես անապահով բնակիչներին աջակցելուն
- «Հայաստան - Էներգետիկ նորություններ» էլեկտրոնային նորություններ պարունակող նամակների կազմում և տարածում
- MUNEE.org ինտերնետային կայքի կանոնավոր թարմացում